Լիլ Արամի

Մենակության համախտանիշ

Շենքը մեխված է փողոցին: Ամենավերևում Քաղն է: Փողոցը երբեք ձայնը չի կտրում: Ամեն երեկո Քաղը ցավացող ոտքերով դուրս է գալիս պատշգամբ: Խռովկան քաղաքն ամեն երեկո ապտակում է նրան ու ամոթանք տալիս իրեն չնկատելու համար: Քաղը ամաչում է և բանտարկվում տանը: Սկզբում նա փորձում է քաղաքի հետ լեզու գտնել, բացատրել իր հոգնածության պատճառները, բայց քաղաքի համառությունը երկար է տևում, խոհանոցում եռացող ջրինը՝ կարճ: Զուրը բրինձ է ուզում, հետո սոխ ու կարտոֆիլ, հետո աղ ու պղպեղ, հետո ձու և կանաչի: Խոհանոցը համբերել չգիտի, խոհանոցը բանականություն չունի: Իսկ քաղաքն անվերջ նեղանում է: Հաջորդ երեկո Քաղը քաղաքին համոզում է, որ իր և խոհանոցի հարաբերությունները նեղ ստամոքսային են՝ ոչ մի լուջ բան, ինքը մի քիչ լարված է՝ ուտել է ուզում, ընտանիքը աշխատանքից հետո հոգնած է՝ սնվել է ուզում: Բայց քաղաքը գիտի ստամոքսի լայնացման մասին, ուստի իրենց կապը համարում է վտանգված: -Մենակ եմ ես, մենակ է իմ աջ ոտքն ու իմ ձախը, մենակ է գլուխն իմ ու երկար ժամանակ լռող իմ բերանը: Մենակ է քաղաքը անգամ . . .

Քաղը որոշում է լքել բնակարանն ու մի քանի օր ման գալ քաղաքից դուրս: Զանգում է ընկերոջն ու երկուսով դուրս են գալիս: Նստում են գնացք: Հսկիչը պատռում է տոմսերը, խնդրում տեղավորվել կապ չունի՝ որտեղ:

Գնացքն անունով արագընթաց է, բայց երկու ժամ է՝ ճեմում է: Ներսի մարդիկ նստած են ցաքուցրիվ, միմյանց հանդեպ անտարբեր, բայց միասնական աղմուկով: Երկու կին են, որ պահում են ճանապարհին ծանոթանալու

քաղցրությունն ու իրենց մտերմությունն ամրապնդում թոռնիկների նկարները ցույց տալով: Նրանք զրուցում են հարմարավետ կոշիկների ու Դե վիտամինի պակասի մասին. գոհ են իրարից: Քադի ընկերը կողքին ձանձրանում է, ասում է՝ Քադը 40-50 տարեկանի հագուստով է ու մեծ է երևում: Քադը չի վիրավորվում: Նա նայում է ճանապարհին ու հիշելու հետաքրքիր քիչ բան է գտնում: Դիմացի նստարանի ծնողը մի աթոռ է կիսում որդու հետ ու գիրք կարդում: Քադը ժպտում է տեսանելի սիրո համար, բռնում ընկերոջ ձեռքն ու հիշեցնում սիրելու մասին: Ընկերը սեղմելով արձագանքում է:

Քադի ընկերը վիրավորելու աստիճան քնում է: Քադը մնում է մենակ: Նրա կողքին ավելանում են երիտասարդը, որը խոսելու կարիք ունի և իր տատիկը: Վերջինս մեկումեջ դանթում է ապակուն հենած ձեռքի վրա: Քադը աշխարհից մի բան է ուզում: Զրուցել: Քադը աշխարհից շատ բան է ուզում: Անձրևը ծորում է ապակուն, ու ամայի է տեսարանը: Քադը լցվել է խոսելու ցանկությամբ, ու ոչ ոք նրան մարդատեղ չի դնում: Թվում է՝ սիրտը հիմա չդատարկված միզապարկի պես կպայթի: Ոտք ծակող խոտեր են գնացքի դրսում: Մի պողպատե արտաքինով ամերիկացի է գնացքի ներսում: Երիտասարդը Քադի հետ խոսում է ամերիկացուց: Քադը փնտրում է խոսակից: Տատիկը թոռանը, որ վաղուց անկախ երիտասարդ է, համոզում է ջուր խմել ու քնել: Տատիկը չի ուզում հետ մնալ խոսակցությունից և չի ուզում նաև՝ թոռը ջրազրկվի:

Մեկի ոտքերը քրտինք են բուրում: Քադը ուզում է՝ պողպատի դեմքով ամերիկացունը լինի: Հասնում է իրեն . քաղցր է առաջարկում՝ զնգում է, չիփս է առաջարկում՝ զնգում է, առաջարկում է խաղալ՝ զնգում է ու հիշեցնում իր պողպատ լինելու մասին: Պողպատները չեն ուտում՝ համազուրկ են, չեն խաղում՝ խաղազուրկ են: Պողպատե դեմքով ամերիկացին վեր է ընկել տեղում, իսկ նրա բացակայող դեմքը մեկ մտնում է զուգարան ու քաշում ջուրը, մեկ՝ բացում ծորակն ու լվացվում: Դեմքը թառում է Քադի ուսերին, անհանգստացնում նրան: Քադը ուզում է դեմքը վերադարձնել տիրոջը:

Մոծակները գիշերը տեղը տեղին օգտվել են տատիկ ունեցող երիտասարդից, ու նրա ձեռքը քոս ընկածի պես չի անջատվում մարմնից: Նրա լեզուն չի բանտվում բերանում, բայց և չի խոսում կարգին բաներից: Քադը փորձում է ազատվել

նրանից ու նայում է գնացքում այլ նստածների: Քադը ապշում է: Հիտլերն է: Ո՞նց թե: Մի քիչ երկարած բեղերով: Անյպես է քնել, որ չճանաչեն: Կուչ եկած ու կոմպլեքսավորված մարմնով: Նրա երբեմնի հաղթականությունը փափուկ բարձի պես հետույքի տակ է առնվել ու տրորվում է ճանապարհը լավ չգնացող գնացքին հավասար: Հիտլերը իրեն զգացնել չի տալիս: Բայց հո վերարկուն ակնհա՞յտ է: Ասում են՝ երբեք չի հանում: Հիմա նա, որ արթնանա, կլռի իր մասին, անունը հարցնեն՝ կասի մի բան, ազգությունը հարցնեն՝ կասի հայ եմ, ամերիկացի եմ, թուրք չեմ: Մտածում է Քադը: Թվում է՝ նրանից բացի մեկ էլ մոծակներն են Հիտլերին տեղը բերել: Կծելիս իրեն մի քիչ խնայել են՝ ուշ ուշ է քորվում:

Քադը սպասեց: Հիտլերն արթնացավ, պողպատե դեմքով ամերիկացին նրան չճանաչեց ու զնգաց նույն նշանակությամբ՝ դատարկ, միատոն, անասելիք, պողպատահունչ: Հիտլերը վարակվեց տատիկից ու դանթաց մի քիչ:

«Վախ փակ տարածությունից:- համոզվեց Քադը,- Կլաուստրաֆոբիա: Աչքերը փակում է, որ զգացնել չտա: Գնացքի խցիկն իր համար չափազանց փոքր է ու մատնող: Ինչպե՞ս չէի գլխի ընկել»: Գնացը տարիքն առած կնոջ պես քստքստում է, մեկ աջ տալիս, մեկ՝ ձախ: Գնացքի մարդիկ կարդում են, սնվում, քնում: Նրանցից ոչ ոք Հիտլերին չի նկատել: Քադը բարձրաձայն ժամն է հարցնում: Հիտլերը բացում է մի աչքը և նայում ժամին՝ մի ժամ տասը րոպեից կհասնենք: Տասը րոպեից: Գերմանամետ ճշգրտություն է: Տասը րոպեից: Քադին սառը քրտինք է պատում:

-Շնորհակալ եմ: Համ էլ ողջույն,- ասում է Քադը,- գնացքը Ձեզ չի՞ ձանձրացնում:

-Ողջու՛յն, ամեննին:

-Տեղացի՞ եք:

-Ո՛չ:

-«Ի՞նչ ռիսկի տեր է: Ուղիղ ասում է՝ ոչ»:

-Կընկերակցե՞ք ինձ, ընկերս քնած է, երկար ժամանակ է՝ նստած եմ: Գնա՞նք ծխարան:

-Գնանք, ինչու՝ ոչ:

-Երկա՞ր ժամանակ է՝ ծխում եք:

-Վերջերս եմ սկսել: Ինչու՞:

-Հավանաբար մինչ այդ մտածում էիք՝ ծխախոտը հնդկացիների վրեժն է սպիտակամորթներից: Ու չէիք ծխում, չէ՞:

-Չէ՛: Մտածում էի չվնասել առողջությունս: Հիմա էլ կորցնելու բան չունեմ:

-Ինչու՞, որովհետև բոլորը կարծում են՝ մեռա՞ծ եք:

-Ի՞նչ տարօրինակ հարցեր եք տալիս:

-Օ՛հ, ներեցեք, ներեցեք: Ի՞նչ նախասիրություններ ունեք:

-Բոլոր առողջ տղամարդկանց նման սիրում եմ ֆուտբոլ, երաժշտություն, գրականություն և կին:

-Սպասե՛ք կռահեմ,- գուգլում է Քադը,- Ֆուտբոլում՝ Շայկեն, գրողներից՝ Կարլ Մայնը, իսկ երաժշտության մեջ կարծում եմ Ռիխարդ Վագներն անգերազանցելի է:

-Ի՛նչ եք ասում: Նրանցից ոչ ոքի չեմ ճանաչում:

-Հըմ, ես առաջարկեցի, բայց ծխախոտս վերջացել է: Դուք չէի՞ք . . .

Տղան, որ փոշտում է Քադից աջ, ստիպում է նրան կտրվել գործից ու իրեն առողջություն մաղթել:

-Վերջին երկուսն է, մեկը՝ Ձեզ, մեկն էլ ինձ:

-Շնորհակալ եմ: Այս ի՞նչ ծխախոտ է, անծանոթ է: Հի՛ն է երևում:

-Պարլամենտ է սովորական: Միլվեր: Գրպանումս թրջվել էր անձրևից: Արևի եմ տվել գույնը գցել է:

-Հա՛ . . . իսկ ի՞նչ գործով եք եկել:

-Ճամփորդում եմ էլի:

-Իսկ ինչու՞ չեք վերադառնում Գերմանիա:

-Չլինի՞ մենք ծանոթ ենք,- զարմացավ Հիտլերը:

-Հնարավոր է,- ժպտաց Քադը:

-Ես խիստ մոռացկոտ եմ վերջերս դարձել:

-Ձեր տարիքը դա թույլ է տալիս: Ասում եք՝ ինչու՞ չեք վերադառնում:

-Անձնական պատճառներ ունեմ: Եկեք վերադառնանք խցիկ: Գիշերը լավ չեմ քնել, արժի մի փոքր էլ աչք կպցնել:

Քադի սիրտը պայթում էր վախից ու հաճույքից: «Ում ասեմ՝ չի հավատա»:

Ամերիկացին ականջակալով է ծնվել, ու ականջակալով էլ պատրաստվում է մեռնել: Երևի: Տատիկ ունեցող երիտասարդը դատարկ ջրից դատարկված շիշը խփում է պատին: Քնել չի կարողանում, բայց և չի ասում բարի լույս խոսակցությունը շարունակելու համար:

Քադը աչքը թեքում է, թե չէ՝ ամերիկացին չքանում է:

«Գնացել է դեմքի հետևից»,- մտածում է Քադը:

Քադի ընկերն այդպես էլ չի արթնանում: Գնացքը հասնում է վերջնակետին: Հիտլերը դուրս է գալիս: Քադը հուսահատ վազում է ետևից .

-Մնաք բարով, Հի՛տլեր:

-Մնաս բարով, Քա՛դ: